ՀԵՌԱԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Դիմում-հայտը լրացվում է dimord.am կայքում սեպտեմբերի 5-ից 25-ը, մինչև 18:00-ն

Դիմորդը ԳԹԿ անձնական համար ստանալու համար ԳԹԿ ***900018003401*** հաշվեհամարին (Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, ՆԶՊ մասնագիտությունների դիմորդները՝ ՇՊՀ ***163528999994*** հաշվեհամարին) յուրաքանչյուր քննության համար վճարված 1500-ական դրամի անդորրագրով և անձը հաստատող փաստաթղթի պատճենով մոտենում է բուհի ընդունող հանձնաժողով՝ աշխատանքային օրերին, ժամը 10-ից 16-ը (ընդմիջում՝ 13:00-14:00):

Մրցույթի արդյունքներն ամփոփվելուց և հաստատվելուց հետո դիմորդը բուհին ներկայացնում է՝

1) միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական, կամ մասնագիտական տեխնիկական կրթության մասին ավարտական փաստաթուղթը՝ համապատասխան ներդիրով,

2) 4 լուսանկար (3 x 4 սմ չափսի),

3) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական) (բնօրինակը և պատճենը, բնօրինակը վերադարձվում է՝ համապատասխանության ստուգումից հետո),

4) զինվորական գրքույկ (առկայության դեպքում), (բնօրինակը և պատճենը, բնօրինակը վերադարձվում է՝ համապատասխանության ստուգումից հետո),

5) Ընդունելության կարգի 41-43-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության (կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները)), առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքներ),

6) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները (առկայության դեպքում),

7) տեղեկանք տվյալ տարվա ներբուհական ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,

8) «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր,

9) առկա ուսուցման համակարգում սովորող անձինք, հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը,

10) Սահմանված կարգով պետության կողմից նպաստի ձևով ուսման վարձավճարի փոխհատուցում ստանալու համար (առկայության դեպքում) ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանք, մարտական գործողություններին մասնակցությունն հավաստող տեղեկանք, եթե զինվորական գրքույկում համապատասխան նշում առկա չէ:

11) Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, ՆԶՊ մասնագիտությունների դիմորդները ներկայացնում են նաև առողջության մասին տեղեկանք՝ պոլիկլինիկայից (նախկին 086 ձև),

12) ԳԹԿ ***900018003401*** հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար վճարված 1500 դրամի անդորրագիր (Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, ՆԶՊ մասնագիտությունների դիմորդները վճարումը կատարում են ՇՊՀ ***163528999994*** հաշվեհամարին):

Անկախ քննության արդյունքից, գումարը հետ չի վերադարձվում:

ՇՊՀ ընդունող հանձնաժողով
+37491743051
+31269494
admission.shsu.am
admisscom@shsu.am